



1. ԱՍՓՈՓԱԳԻՐ

Ա. Նպատակը

Քաղաքականության նպատակն է սահմանել Կրթահամալիրում տարբերակված ուսուցման կազմակերպման և ներառական կրթության ապահովման հիմնական սկզբունքներն ու դրույթները:

Բ. Տարածումը

Քաղաքականությունը բաց փաստաթուղթ է և հասանելի է Կրթահամալիրի ողջ անձնակազմին, ծնողներին, սաներին և այլ շահակիցներին: Փաստաթղթի հասանալիությունն ապահովվում է պաշտոնական կայքէջում տեղադրելու միջոցով:

Գ. Պատասխանատուն

Քաղաքականության ներդրման և իրականացման, ինչպես նաև պահանջների կատարման համար պատասխանատու է դպրոցական ողջ համայնքը:

Դ. Վերանայումը

Փաստաթուղթը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում: Փոփոխությունները քննարկվում են ուսուցչական, ծնողական և աշակերտական համայնքի հետ: Վերանայումները հաստատվում են Մանկավարժական խորհրդի նիստում:

2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- Դպրոց, Կրթահամալիր - «Օհանյան» կրթահամալիր
- Քաղաքականություն - «Ներառական կրթության ապահովման քաղաքականություն»
- Ներառական կրթություն - կրթություն, որի դեպքում բոլոր սաները հնարավորություն ունեն սովորել նույն դասարանում, ստանալ բարձրորակ ուսուցում և հաջողության հասնելու համար անհրաժեշտ օժանդակ միջոցներ:
- Ուսումնառության հատուկ կարիքներ ունեցող սան - սովորող, որի ֆիզիկական և (կամ) մտավոր, հոգեկան զարգացման առանձնահատկությունները խոչընդոտում են կրթական ծրագրերի յուրացմանը՝ առանց կրթության առանձնահատուկ պայմանների:
- Սան, աշակերտ - Կրթահամալիրի կրթական ծրագրում ներգրավված ուսանող:

3. ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՑՈՒԹՅՈՒՆ

3.1. Կրթահամալիրն ապահովում է հավասար հնարավորություններ բոլոր սաների համար:



Կարևորելով բոլոր սովորողների լիարժեք մասնակցությունը ուսումնառության գործընթացում՝ կրթահամալիրի ողջ անձնակազմը ձգտում է ձևավորել հավասար, մատչելի, աջակցող և ներառական կրթական միջավայր, որը կնպաստի սովորողների հոգեբանական, սոցիալական և ֆիզիկական առողջության ամրապնդմանը:

3.2. Կրթահամալիրում ներառական մշակույթի ձևավորումն իրականացվում է.

- դպրոցական համայնքին իրազեկելով վերոնշյալ գաղափարախոսության մասին,
- շարունակաբար զարգացնելով Կրթահամալիրի կառավարման համապատասխան մարմինների, վարչական և ուսուցչական կազմի կարողություններն ու հմտությունները,
- մշակելով ներառական կրթությանն աջակցող ինստիտուցիոնալ մեխանիզմներ, ինչպես նաև ուսուցման և գնահատման մոտեցումներ,
- ստեղծելով սաների ուսուցման, ինքնաարտահայտման համար բարենպաստ պայմաններ,
- շարունակաբար վերլուծելով և բարելավելով ընթացիկ իրավիճակը:

4. ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

4.1. Կրթահամալիրը ծառայություններ է մատուցում հետևյալ ուղղություններով.

- Տեսողական խնդիրներ,
- Լսողական խնդիրներ,
- Շնորհալիներ (gifted and talented students),
- Քրոնիկ հիվանդություններ:

4.2. Կրթական լիարժեք պայմաններ ապահովելու և արդյունավետորեն ներառական գործընթացը կազմակերպելու նպատակով Կրթահամալիրում գործում են հետևյալ օժանդակ ծառայությունները.

- Բուժքրոջ ծառայություն,
- Հոգեբանի ծառայություն,
- Լոգոպեդի ծառայություն:

4.3. Ուսումնառության հատուկ կարիքներ ունեցող սաներին աջակցելու, ինչպես նաև արդյունավետ ուսումնառություն ապահովելու նպատակով Կրթահամալիրն առաջնորդվում է անհատական ուսումնական պլաններով և բազմազան գնահատման մեթոդներով, կազմակերպում լրացուցիչ (արտալսարանային) պարապմունքներ (ըստ անհրաժեշտության), պարապմունք-խորհրդատվություններ և այլն:



- 4.4. Հոգեբանական, բժշկական և լոգոպեդական ծառայության ներկայացուցիչները մշտապես կապի մեջ են դպրոցի ծնողների, վարչական և ուսուցչական կազմի հետ՝ իրազեկելով և աջակցելով առանձնահատուկ կարիքներ ունեցող սաների կրթության կազմակերպմանը: Վերջիններս անհրաժեշտության դեպքում իրականացնում են նաև առաջնային դիֆերենցացիա՝ հարկ եղած դեպքում ուղղորդելով ծնողին իրականացնել հավելյալ հետազոտություններ:
- 4.5. Սովորողներին վերաբերող բոլոր տեղեկությունների համար ապահովվում է գաղտնիության սկզբունքը, բժշկական և հոգեբանական տվյալները դպրոցում հասանելի են միայն սահմանափակ թվով անձանց: Ուսուցիչները ստանում են միայն դասի ընթացքին առնչվող ընդհանրական տեղեկություններ:

5. ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՈՒՄ

- 6.1. Դպրոցի վարչական և ուսուցչական անձնակազմի հմտությունների շարունակական զարգացման և բարելավման նպատակով.
- Կազմակերպվում են սեմինարներ, վերապատրաստումներ, փորձի փոխանակման աշխատաժողովներ:
 - Նոր ընդունված ուսուցիչները և աշխատակիցները նախքան հատուկ կարիքներ ունեցող սաների հետ աշխատելը պարտադիր կերպով անցնում են համալիր վերապատրաստում:
- 6.2. Ծնողների իրազեկվածության բարձրացման նպատակով.
- Տարեկան առնվազն մեկ անգամ կազմակերպվում է «Բաց դռների օր» միջոցառումը, որը ներառում է նաև այցելություն դասարաններ ու շրջագայություն դպրոցի տարածքում, ծանոթացում հատուկ ծրագրերին, դպրոցում գործող ծառայություններին:
 - Վարչակազմի թույլտվությամբ ծնողը կարող է ստանալ դասին ներկա գտնվելու հնարավորություն:
 - Առանձնահատուկ կարիքներ ունեցող աշակերտների ծնողների համար կազմակերպվում են իրազեկման և խորհրդատվության հանդիպումներ և սեմինարներ:
 - Կազմակերպվում են տարաբնույթ հանդիպումներ և ժողովներ, ստեղծվում փորձի փոխանակման ֆորումներ և հարթակներ, որտեղ ծնողները մտքեր փոխանակել և այլն:
- 6.3. Դպրոցի նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների բարելավումը և կատարելագործումը անընդհատ գործընթաց է: